



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2014 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ, ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Ձեր՝ 16.07.2014թ. թիվ 01/15/3748-14 հանձնարարականի

Հարգելի պարոն Գևորգյան

Հատուկ կրթության համակարգի բարեփոխումների ծրագրի նախագիծը քննարկվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչությունում: Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բարեփոխումների ծրագիրը ընդհանուր առմամբ հավանության է արժանացել՝ բացառությամբ 20-րդ կետի: Մեր կարծիքով, հատուկ դպրոցի մարզային ենթակայությունը չի կարող արգելք հանդիսանալ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների միասնական քաղաքականության իրականացմանը, դեռ ավելին, հաշվի առնելով, որ հատուկ հանրակրթական դպրոցների գործունեության ընթացքում անընդհատ անհրաժեշտություն է առաջանում լիազորված մարմնի կողմից օպերատիվ լուծումներ տալու, ինչպես նաեւ օգտագործելու տարբեր ծառայությունների հնարավորությունները՝ նպատակահարմար ենք գտնում մարզային ենթակայության հատուկ դպրոցները թողնել մարզային ենթակայության:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ծրագրի նախագծից հանել 20-րդ կետը:

Հարգանքով՝

ՄԱՐԶՊԵՏ

կատ. Մ.Սայադյան
հեռ. /0322/ 2-32-99

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ